COVID-19

Frequently Asked Questions – Armenian

Հաճախակի տրվող հարցեր. հայերեն

23 մարտի, 2020թ.

Հարց	Պատասխան
Ինչպիսի՞ն կլինի հաշմանդամ աշակերտների կրթությունը դպրոցը փակ լինելու ընթացքում:	Ընթերցանության նյութերով և առաջադրանքներով տուն տանելու համար նախատեսված փաթեթներ են պատրաստվել LAUSD-ի բոլոր աշակերտների համար: Բացի այդ, LAUSD-ը PBS-ի, SoCal-ի, KCET-ի և KLCS-TV-ի հետ համագործակցում է՝ անվճար լրացուցիչ կրթական նյութեր տրամադրելու՝ դպրոցները փակ լինելու ընթացքում ուսուցման աջակցություն տրամադրելու նպատակով: Սա ներառում է նախամանկապարտեզի տարիքից մինչև 12-րդ դասարանի կրթական ծրագրերը և առցանց նյութերը: Առցանց ռեսուրսներն անվճար են և դրանցից կարելի է օգտվել հետևյալ հղմամբ՝ https://achieve.lausd.net/resources
Իմ երեխային սարք և/կամ աջակցող տեխնոլոգիա կտրամադրվի՞, որն անհրաժեշտ է հեռահար ուսուցումից օգտվելու համար:	LAUSD-ը ջանասիրաբար աշխատում է՝ երաշխավորելու, որ բոլոր աշակերտները կարողանան օգտվել առցանց ռեսուրսներից և կշարունակի սարքեր տրամադրել աշակերտներին հաջորդ մի քանի շաբաթվա ընթացքում: Այն աշակերտները, ովքեր արդեն նշանակված աջակցող տեխնոլոգիայի սարք ունեն ըստ իրենց IEP-ի, LAUSD-ն աշխատում է՝ վստահ լինելու, որ աջակցող տեխնոլոգիայի սարքերը մատչելի են բոլոր աշակերտներին: Եթե աջակցող տեխնոլոգիայի վերաբերյալ հարցեր ունեք, խնդրում ենք դիմել Քերի Թեփիին՝ ktapie@lausd.net էլ.փոստի հասցեով:
Իմ երեխան առնչվող ծառայություններ է ստանում (այսինքն՝ լոգոպեդիա, հարմարեցված ֆիզիկական կրթություն, էրգոթերապիա և այլն): Այս ծառայությունները դպրոցը փակ լինելու ընթացքում մատչելի կլինե՞ն:	Սովորաբար, հաշմանդամ աշակերտները մատակարարներից ուղղակի աջակցություն են ստանում: Ելնելով COVID-19-ի նախազգուշացումներից բխող սոցիալական հեռավորության պահանջներից, առնչվող ծառայությունների տրամադրումը պետք է կարգավորվի և հարմարեցվի՝ բավարարելու հեռակա ուսուցման հնարավորությունները: LAUSD-ը ծրագիր է մշակում՝ այս օժանդակություններն աշակերտներին տրամադրելու համար:
Ո՞ւմ պետք է դիմեմ՝ իմ երեխայի ծառայությունների մատակարար(ներ)ի առնչությամբ:	Ծնողներին խորհուրդ է տրվում ուսուցիչների և մատակարարների հետ էլ.փոստի միջոցով կապ հաստատել: Ծառայություն տրամադրողներին վերաբերող հավելյալ հարցերի դեպքում կարող եք դիմել ձեր տեղական շրջանի հատուկ կրթության գրասենյակ: LD Northwest (818) 654-3600 LD East (323) 224-3100 LD Northeast (818) 252-5400 LD West (310) 914-2100 LD Central (213) 241-0126 LD South (310) 354-3400
Իմ երեխան այլընտրանքային ուսումնական ծրագրում է. ուսուցման ի՞նչ օժանդակություններ կտրամադրվեն:	Ուսուցիչները նյութեր և ռեսուրսներն են մշակել՝ այլընտրանքային ուսումնական ծրագրում ընդգրկված աշակերտներին աջակցելու համար: Այլընտրանքային ուսումնական ծրագրի համար նախատեսված ուսուցման առցանց ռեսուրսները մատչելի են աշակերտներին և ծնողներին՝ LAUSD-ի մեր կայքէջի՝ https://achieve.lausd.net/resources և Ուսուցման եզակի համակարգերի ((Unique Learning Systems (ULS)) միջոցով:
Հատուկ կրթության կենտրոնները դեռ բա՞ց են:	Ոչ, հատուկ կրթության կենտրոնները համարվում են LAUSD դպրոցներ և ներառվում են այն հրահանգի ներքո, որ շրջանում գործող բոլոր դպրոցները պետք է փակվեն:
Երկարաձգված ուսումնական տարի (ESY) 2020-ի ի՞նչ պլաններ կան:	Շրջանը շարունակում է ծրագրել ESY-ի համար, որը ենթադրաբար պլանավորված է 2020թ. հունիս 29-ից հուլիս 24-ն ընկած ժամանակահատվածում: Սակայն, մենք հասկանում ենք, որ այս պահի մեր վիճակից կախված, ծրագիրը պետք է փոփոխական լինի և կարող է փոխվել:
Ես IEP թիմի պլանավորված հանդիպում ունեմ դրպոցը փակ լինելու ընթացքում. այն տեղի կունենա՞:	Շրջանը ծրագիր է մշակում՝ հեռակա կարգով IEP թիմի հանդիպումներն անցկացնելու համար (հեռախոսակոնֆերանսով, տեսակոնֆերանսով և այլն): COVID -19-ի առնչությամբ դպրոցները փակվելու պատճառով բաց թողնված IEP թիմի ցանկացած հանդիպում կվերապլանավորվի՝ սույն ծրագրի համաձայն:
Իմ երեխան դպրոցները փակ լինելու ընթացքում գնահատում ունի: Նրան հնարավոր կլինի՞ գնահատել:	Շրջանը ծրագիր է մշակում՝ դպրոցները փակ լինելու ընթացքում գնահատումներ անցկացնելու համար: COVID -19-ի առնչությամբ դպրոցները փակվելու պատճառով բաց թողնված ցանկացած գնահատում կվերապլանավորվի՝ սույն ծրագրի համաձայն:
Իմ երեխան փոխհատուցող ժամանակ կստանա՞ այն ծառայությունների համար, որոնք բաց են թողնվել դպրոցները փակ լինելու ընթացքում:	Երբ դպրոցները բացվեն, IEP թիմերը կհանդիպեն և անհատականացված որոշումներ կկայացնեն, թե արդյոք փոխհատուցող կրթության և ծառայությունների անհրաժեշտություն կարող է լինել, թե՞ ոչ: